

էանը, Հր. Զարդարեանը, Ղ. Մելոյեանը, Գ. Մխիթարեանը, Շ. Նարդուհին եւ ուրիշներ: Ի հարկէ, բոլոր նիւթերն էլ նոյնարժէք չեն. բուււմ է, բէ ընտրութեան ժամանակ կարելի էր աւելի

խտապահանջ լինել, բայց, ընդհանուր առմամբ, գոհացուցիչ են: Մեր նիւթական պայմաններում Հր. Բալուեանի գործը շնորհաւորելի է եւ քաջալերանքի արժանի:

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԳԵՐՄԱՆԵՐԻՆ

Մեր աշխատակից Դոկտ. Արեգեան արձակ քարգմանութեամբ գերմաներէնի է վերածել եւ զանազան ժամանակներ գերման մամուլի մէջ լոյս ընծայել Յովհ. Թումանեանի աւանդակէրից շատերը: Այդ քարգմանութիւնները մի կարեւոր մասով նախապէս հրատարակել են Բերլինի Օսկար Քիւլ (O. Kuehl) մամուլի դիւանի կողմից եւ սպա նրա միջոցով արտատրութեան իրաւունք տրւել զանազան օրգաններին: Լոյս են տեսած ցարդ.

1.- *Արեւ եւ Լուսին* (Die Sonne und der Mond): Ա. սպագրութեամբ՝ Leipz. N. Nachr. օրաթերքում (31 մայիս 1925 թ.), Բ. սպագրութեամբ՝ Deutsche Werkm. Zeitung-ի մէջ (27 սեպտ. 1929 թ.):

2.- *Անբախտ վաճառականներ* (Die ungluecklichen Kaufleute): Ա. սպագրութեամբ՝ Բերլինի Neue Zeit թերքում (24 մայիս 1925), Բ. սպ.՝ Օ. Քիւլի մամուլի դիւանում (5 ապր. 1927 թ.):

3.- *Փարվանա* (Parwana), Օ. Քիւլի մամուլի դիւան (9 մարտ 1926 թ.):

4.- *Մի կաթիլ յեղը* (Um einen Tropfen König): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

5.- *Զարի վերջը* (Des Boesen Ende): (23 փետր. 1928):

6.- *Աղջկայ սիրտը* (Des Maedchens Herz): Նոյնտեղ (6 դեկտ. 1928):

7.- *Պօղոս - Պետրոս* (Peter Paul): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

8.- *Աղաւնու վանքը* (Lenktemur): «Der Orient» ամսագիր (մարտ - ապրիլ 1930 թ.):

9.- *Լօռեցի Սաբօն* (Loretzi Sako): Frau Meisterin: Յաւելած D. Werkm. Zeitung-ի (8 օգոստ. 1931):

10.- *Շունն ու կատուն* (Der Hund und der Kater): Օ. Քիւլի մամուլի դիւան (11 օգոստ. 1932 թ.):

11.- *Անիծած հարսը կամ Յոսպպի ծագումը* (Der Wiedehopf oder die verfluchte Schwiegertochter): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

12.- *Արծիւն ու կաղնին* (Der Adler und die Eiche): Նոյն տեղ եւ նոյն ժամանակ:

Յովհ. Թումանեանի միւս գրածֆներից Ա. Արեգեանը քարգմանել եւ տրպագրել է.

13.- *Գիգորը* յայտնի գրածֆը (Gikor). համառօտած: Լոյս է տեսած նախապէս Օ. Քիւլի մամուլի դիւանում (12 ապրիլ 1928 թ.):

14.- *Տէրն ու ծառան* հեֆեաքը (Der Herr und Sein Diener): Նոյնտեղ (19 մայիս 1932 թ.):

Թարգմանած եւ *անտիպ* են տակաւին Յովհ. Թումանեանի նման մի քանի ուրիշ գրածֆներ եւ հեֆեաքներ:

1.- Թմկաբերդի առումը: 2.- Այսբամար: 3.- Գառնիկ ախպէր: 4.- Քաջ

Նագարը: 5.- Չախչախ քաղաքը: 6.- Քէֆ անողին քէֆ չի պակսիլ (փոխադր.): 7.- Բարեկենդանը: 8.- Կիկոսի մահը: 9.- Ոսկու կարասը (փո-

խադր.):

Թարգմանած է Թումանյանի Գէլը անունով ծանօթ գրածքն եւս (Կենդանիների կեանքից):

### ՊՈՒՇԿԻՆԸ ՀԱՅԵՐԵՆ

Ինչպէս յայտնի է, այս տարի տօնեցաւ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Պուշկինի մահուան հարիւրամեակը: Այդ առթիւ, Հայաստանում եղան բազմա - քիւ հայերէն հրատարակութիւններ Պուշկինի գործերից, ինչպէս նաեւ կատարեցին յոբելեանական հանդէսներ:

Պէտք է յիշել, որ Պուշկինի բանաստեղծութիւնների հայերէն քարգմանութիւնը սկսել է շատ վաղուց: Այսպէս, դեռ 1830 թ. Պրոֆ. Էմիլը քարգմանել է «Բախչիսարայի շատրուան»-ը գրաբար հայերէնով: 1843-ին լոյս տեսաւ Համագասպեանի կազմած ռուսական բանաստեղծութիւնների հայերէն մի ժողովածու, որի մէջ Պուշկինից էլ կար 10 տանաւոր: Ապա, գնագան ժամանակներում, եղել են ուրիշ շատ քարգմանութիւններ, եւ, առհասարակ, հայ բանաստեղծներից շատերը գտնել են Պուշկինի ազդեցութեան տակ: Յովի. Թումանյանը, օրինակ, իր վերաբերմամբ ինքը խոստովանում էր այդ փաստը: «Ես գտնում եմ, — գրում էր նա — որ ռուս պոէտները, գլխաւորապէս Պուշկինն ու Լերմոնտովը, միշտ ինձ

հարգատ եւ աւելի մօտիկ են քուսցել, քան մեր հայկական պոէտները»: Եւ Թումանյանը ունի մի քանի սեփական քարգմանութիւններ Պուշկինից, ինչպէս «Ջրահեղձը», Օլեգի երգը» եւ այլն:

Պուշկինի երկրպագուներից էր եւ Ղ. Աղայեանը, որ տւել է «Ոսկէ ձկնիկ»-ի դեռ չգերազանցած քարգմանութիւնը: Այսօր, կարելի է ասել, Պուշկինի ստեղծագործութեան հիմնական մասը արդէն քարգմանած է հայերէն — «Եւզենիյ Օնեգին», «Բախչիսարայի շատրուան», «Պոլտուա», Գնչուներ», «Կովկասեան զերի», «Կալանաւորը», «Պղնձեայ հեծեալ» քերթածները, «Ժըլատ ասպետը», «Սրբախնդ Ժանտատի Ժամանակ», «Մոցարտ եւ Սալիէրի» քատերական երկերը, «Ճանապարհորդութիւն զէպի Էրբուս», «Դուբրովկի», «Կապիտանի աղջիկը» եւ ուրիշ արձակ էջերը, ինչպէս նաեւ գրեթէ բոլոր գլխաւոր բանաստեղծութիւնները — «Յուշարձան», «Գիւղը», «Ազատութիւն», «Անչարը», «Մարգարէ» և այլն:

### Ա.ՀԱՐՈՆԻ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ

Լսում ենք, թէ բանաստեղծ Ահարոնը, որի քնարի հնչիւնները վաղուց լըռել են գրական հրապարակում, պատրաստում է իր բանաստեղծութիւնների հրատարակութիւնը առանձին հատորով: Կարող ենք միայն ազգունել այդ ծրագրից: Ահարոնը մեր սաղանդաւոր, բայց քիչ նանաչւած բանաստեղծներից

է: Թերթերի եւ պարբերականների մէջ կորած, կամ դեռ եւս անտիպ մնացած նրա քերթածների համախմբումը մի հատորի մէջ հնարաւորութիւն պիտի տայ հանրութեան ներկայացնելու Ահարոնի իսկական բանաստեղծական դէմքը: